

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԱԳԱԶԵԿՈՎ

ԱՐԵԱՎԵՆՔ
ՆՈՐ ՀԱՅԻ
ՀԱՄԱՐ

ԹԱՐ. Հ. Ա.

381.6

Բ-60

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴՅԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՏՐԱՑ.

1981-IX

ՄՊՍԿԱ

ՈՊՍՈՎ-ԴՈՒ

ԱՐԺԱՎԵՆՔ ՆՈՐ ՀԱՅԻ ՀԱՄԱՐ

ԿՈՒԼՏՒՐՆԱՐԿՆԵՐԻ ԱԳԻՏ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՀԱՅԱՄԹԵՐՄԱՆ ԿԱՄՈԱՆԻԱՅՈՒՄ ՅԵՎ ՀԱՅԸ ՀԱՆՉԱՌՈ-
ՆԵՐԻ ԿՈՒԼՏ-ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ

381. 6

Բ - 60

Պետք եւ կազմակերպել հացամթեր-
ման կամպանիան ՍՏԱԼԻՆԸ

Հացամթերման կամպանիան կարևո-
րագույն ողակն եւ կոլխոզների կազմա-
կերպչական-անտեսական ամբազնդման
գործում:


Հնգամյակի վճռական տարում հացա-
մթերումների հարգածային իրազործու-
մը կազմանով 518 ձեռնարկություննե-
րի և 1400 ՄՏԿ-ների աշխատանքի ըս-
կումը:

ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԸ — ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖՐՈՆԸ

Մենք խոշորագույն նվաճումներով թևակոխեցինք 1931 թվականի հացամթերման կամպանիան: Հացամթերումների հաջողակ կատարումը կապահովե սոցիալիստական շինարարության հետաքա հաղթանակները և կթուլացնի դասակարգային թշնամիների գիմազրությունը: Գյուղի ամբողջ կուսակցական-խորհրդային հասարակայնության առաջ կանգնած եւ մարտական մի խնդիր — իր ժամանակին անցկացնել տնտեսական-քաղաքական այս կարևորագույն կամպանիան:

Մեր յերկրամասում 1931 թվականի հացամթերումներում առաջ կանգնած է մարտական մի խնդիր — իր ժամանակին անցկացնել տնտեսական-քաղաքական այս կարևորագույն կամպանիան:

35128-62



ՀԱՅԱ-ԱՐՄ.ԾԲ

Ա. Ա. ՄԱՅՆԻԿՅԱՆ

24 JUL 2013

55.103

- 2 -

կամպանիան անց ե կացվում այնպիսի պայմաններում,
վորոնք խիստ տարբերվում են անցյալ տարվանից:

Վորպես հետևանք կուսակցության դիմավոր գծի ան-
շեղ կերպուման, յերկու ֆրոնտում—աջ ուղղութունիստական
իրեղորդիչիցի ու պղակտիկայի և ձախ ցատկումների ու խո-
տորության դեմ մղած վճռական պայքարի, —Հյուսիսային
կովկասը խոշոր հաջողություններ ձեռք բերեց դյուզատըն-
տեսության սոցիալիստական վերակառուցման, համատա-
րած կոլեկտիվացման ավարտման և նրա հիմունքով կուլա-
կության, վորպես դասակարգի, վերացման մասին ՀԿ(ը)կ
կենտկոմի պլենումի վորոշումներն իրագործելու բնագավա-
ռում:

Մինչև 1931 թ. ոգոստոսի 20-ը մեր յերկրամասը հիմ-
նականում ավարտեց կոլեկտիվացումը: Զքավորմիջակ տըն-
տեսությունների 88 տոկոսն (առանց մի քանի ազգային
ռայոնների) ընդգրկած ե կոլխոզներում: Աճել ե սոցիա-
լիստական սեկտորի ցանքային տարածությունը, ավելա-
ցել ե գյուղատնտեսության մեքենայացումը: Սովորողներն
ու ՄՏԿ-ները դարձել են յերկրամասի սոցիալիստական վե-
րակառուցման վճռական ուժեմ: Մենք լուծել ենք՝ հացահա-
տիկային պրոբլեմը (մեծ խնդիրը) և վճռական հաջողու-
թյունների յենք հասել տեխնիկական կուլտուրաների (բամ-
բակ, բրինձ, ճակնդեղ և այլն) զարգացման ասպարեզում:

Հացամթերումների առաջիկա կամպանիայում կոլխոզ-
ների ու ՄՏԿ-ների տեսակարար կշիռը կկազմի յերկրամա-
սի ամբողջ ապրանքային արտադրանքի մինչև 70 տոկոսը,
իսկ սովորողների հետ միասին—92—95 տոկոսը: Հենց դրա-
նով ել վորոշվում են հացամթերումների նոր պայման-
ները (ՀԿ(ը)կ Յերկրկոմի պլենում):

Վորպեսի հարվածային կերպով իրագործել բերքահա-
վաքման—հացամթերման կամպանիան, պետք ե վերցնել

- 3 -

աշխատանքի բոլշևիկյան տեմպեր, մարտականորեն զորա-
հավաքել կոլխոզային մասսաների ակտիվությունը, ճիշտ
դասավորել ույժերը, լայնորեն ծավալել մասսայական բա-
ցատրական աշխատանքը, սոցիալիստական մրցությամբ ու
հարվածայնությամբ ընդգրկել բոլոր կոլխոզները, հացամթ-
երման կայանները, ամեն մի կուլտուր-լուսավորական
հիմնարկություն և առանձին կուլտ-բանակայիններին:

Հարկավոր ե աշխատանքն այնպիս կազմակերպել, վոր
հենց սկզբից այս ուսրվա հացամթերումները նպաստեն կոլ-
խոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման,
աշխատանքի կազմակերպման, հաշվառքի լավ դրվածքին,
գործարքային սիստեմի անցկացման, աշխատանքի բարձր
վորակի համար մղվող պայքարին, բարձր ապրանքայնու-
թյամբ ագրարակների (ֆերմա), կոլխոզային ագարակների
կազմակերպման և կազմակերպման ստեղծման:

1931 թվականին հացամթերումները կմնան իբրև գա-
սակարգային պայքարի ամենակարևոր ճակատամասերից
մեկը: Լիկվիդացիայի յենթարկվող կուլակության մնացորդ-
ները պայքարել են և պայքարում են կոլեկտիվացման և
գյուղատնտեսական աշխատանքների հաջող կատարման դեմ:
Դասակարգային թշնամին փորձում ե ձգձգել հացի կալսը:
Նա, անկասկած, կուլենա վիճեցնել հացամթերման պլան-
ների կատարումը: Այս հանգամանքը պահանջում է մի ա-
ռանձին արթնություն և անհաշություն՝ կուլակի ու նրա
ձայնակիցների գեն մղվող պայքարում:

Տեղերից ստացվող լուրերն ասում են, վոր կոլխոզնիկ-
ների մի քանի խմբակների մեջ գոյություն ունեն դեռ ևս
չփոչնչացված՝ մանր-սեփականատիրական, սպառողական
հակումներ, վորոնք, կուլակային ագիտացիայի հետևանքով,
առանձնապես ուժեղ կարող են հայտնարերվել հացամթեր-

ման կամպանիայում: Դասակարգային թշնամու ձայնակիցները պետք ե հանդիպեն խորտակիչ հականարվածի և մերկացվեն մասսաների աչքի առաջ:

Հացամթերման պլանները հարվածայնորեն կատարվելու համար կոլխոզնիկների զորահավաքման ուժեղ միջոց ե հանդիսանում մասսայական քաղաքական-լուսավորական աշխատանքը:

Կուլտոհիմնարկները պետք ե ձեռքից բաց չթողնեն այն մասսայական աշխատանքի փորձը, վոր նրանք սկսել են դաշտերում, — գարնանացանի և քաղհանի աշխատանքների ժամանակ — և պետք ե վերակառուցեն կոլխոզնիկների ու անհատականների սպասարկման իրենց աշխատանքը, վորոնք աշխատում են բերքահավաքման, կալսի ու հացամթերմանների վրա:

Խըճիթ-ընթերցարանների և կոլխոզային ակմբների ուշադրությունը պետք ե կենարոնանա բերքահավաքման-հացամթերման կամպանիայի գործական հարցերի շուրջ:

Քաղաքական-լուսավորական հիմնարկների մարտական խնդիրն ե՝ հացամթերման կամպանիայի պլաններն իր ժամանակին հասցնել մինչև յուրաքանչյուր կոլխոզնիկ, մասսաներին կաղմակերպել ձևական գործարքային սիստեմի դեմ, յեկամուտների բաշխման ասպարեզում կուլակային «հավասարեցման», աշխատանքային որերի հաշվառքի բացակայության դեմ, վճռական պայքար մղել աշխատանքի բարձր վորակի համար, դեպի ինվենտարն անփույթ վերաբերվելու դեմ, բերքահավաքի ու կալսի, հացի տեղափոխության ժամանակ աշխատանքի դիսցիպլինան խախտելու դեմ:

Պետք ե ողնել կուսակցական բջիջին, կոլխոզին ու հացամթերման կազմակերպություններին՝ կարգավորելու այն

պայքարը, վոր մզում են նրանք բերքի կորսաների, մարդկային ու քարշող ույժի անողութ պարապուրդների (պրոստոյների) գեմ:

Վաղորոք պատրաստել տարան, տարածել հնգամյակի Յ-րդ, վճռական տարվա փոխառության որվիգացիաները, կոլխոզնիկների գիտակցության մեջ խորացնել այն միտքը, վոր հացի ավելցուկների ժամանակին հանձնումը, հացամթերման պլանի ժամանակին կատարումը — յուրաքանչյուր կուլտուրանակայինի, յուրաքանչյուր կոլխոզնիկի և անհատականի պատմի խնդիրն ե:

Կուլտուր-լուսավորական հիմնարկների ամբողջ աշխատանքը հաջողություն կունենա միայն այն ժամանակ, յերբ կառուցվի միասնական կուլտուրական պլանի, ոպերատիվ ղեկավարության, կուլտոհիմնարկների ու հասարակական կազմակերպությունների միջև պարտականությունները ճշշգրիտ բաշխելու և աշխատանքի հարվածային մեթոդներ կիրառելու հիման վրա:

«Բնկ. Բուրնովն առաջարկում ե սահմանել սոցիալ-կուլտուրայի աների վարչիների, խրճիթ-ընթերցարանների և մասսայական քաղ-լուսավորական այլ հիմնարկների վարչիների անձնական պատասխանատվություն՝ մթերակայաններում, կարմիր անկյուններում և կալերում մասսայական քաղ-լուսավորական աշխատանքի դրվածքի համար: Ժողովրդական կրթության ուսունական տեսուչներից պետք ե ընտրվեն աշխատողներ, վորոնք պետք ե անձնապես պատասխանատու լինեն մասսայական աշխատանքի ծավալման համար:

Անհրաժեշտ ե, վոր հացամթերմանների ասպարիզում մասսայական աշխատանքի պլաններն իր ժամանակին հաստատվեն ուայդործկոմների նախագահությունների ու գյուղ-

խորհուրդների կողմից,—մասնավանդ այն ռայոնների համար, վորտեղ կան սովորությունները ու ՄԾԿԱներ, մթերակայաններ, վորտեղ կատարվում են հացի բեռնումն ու տեղափոխությունը:

Հասարակական աջակցությամբ պետք է կազմակերպվեն կուլտ-քրիզադներ խրճիթավարներին ու ռայոննական տեսչներին ոգնելու համար:

Մասսայական աշխատանքի համար պատասխանատուները պարտավոր են տասն որը մեկ անգամ ռայործեկումների առաջ դեկուցել իրենց գործներության մասին»:

(«Իզվեստիա» 31/VII)

Մասայական աշխատանիքը—հացամթերումների ուժեղ լծակ:

Կուտիմ նարկների ամրող ցանցը յերեսով դարձնենք դեպի արշավի նոր հացի համար:
Կազմակերպել գործնական ոգնությունը հացի համար մղվող պայմանին

ՀԱՅԸ—ԿԱԼՍԻԶԻՑ ԴԵՐԻ ԵԼԵՎԱՏՈՐ

Հացամթերումների մասին ՀԿ(Բ)Կ կենտկոմի՝ 1931 թվականի հուլիսի 15-ի վորոշումը պարտավորեցնում է բոլոր քաղաքական-լուսավորական հիմնարկություններին՝ վոչ միայն ամենալայն բացատրական աշխատանք կատարել կոլխոզների, անհատական գյուղացիների, բանվորների—մասնավանդ հացի բեռնումն ու տեղափոխությունն սպասարկողների մեջ,—բերքահավաքման ու հացամթերման կամպանիաներիշուրջը,—այլ և կազմակերպել գործնական ոգնու-

թյուն մթերող որդաններին՝ հացի պլանը ժամանակին կատարելու համար:

Խրճիթ-ընթերցարանների ու ակումբների ամբողջ կուլտուրական ակտիվը պետք է ոգնե հացամթերման պարտադիր առաջադրությունները ժամանակին կատարելուն: Քաղլուսավորական հիմնարկների ցանցը միացվում է հացամթերման ահազանգին:

Բոլոր հասարակական, կոլխոզային կազմակերպությունները, հացի կալսման բոլոր կայանները, մթերակայաններն (ըսուկա) ու ելեվատորները պետք է առնվեն կոլխոզային հասարակայնության վերահսկողության տակ:

Հարգածային կոլխոզներից կազմվում են բրիգադներ, վորոնք ստուգում են, թե վորչամբ կոլխոզը յերեսով դառնում է դեպի տնտեսական-քաղաքական կամպանիան: Արդյոք նա կազմել է փոխադրական բրիգադներ՝ հացը կալսման տեղից մթերակայանները տեղափոխելու համար, արդյոք նա ապահովել է սայլերը, քարշող ույժն և տարան պատրաստի ունենալու գործը: Արդյոք ինչ են անում կոռոպերատիվ որգանները, հացը հանձնողներին ապրանքներ ու սննդամթերքներ հայթայթելու համար: Ի՞նչպես են նըրանք կազմակերպում ելեվատորներին և հացի մթերակայաններին կից՝ կուլտուրական թեյատրներում, կոռպերատիվ հաշարաններում ու կրպակներում՝ կենցաղային սպասարկումը:

Ինչու յեն կարմիր գումակները (աբող) յերկար մընում ելեվատորների մոտ. ինչու յե ուշանում հացի ուղարկումը:

Բրիգադայի անդամները պետք է հաշվի առնեն այս բոլորը, վորպեսզի վերացնեն այն պատճառները, վորոնք խանգարում են հացամթերման պլանների իրագործմանը:

Երբահավաքման—հացամթերման ահազանգը պետք է

Հայտնաբերել գյուղատնտեսական ինվենտարի (կալսիչների, արակտորների և այլն) զրությունը, դեպի սրանց՝ կոլխոզների վերաբերմունքը, աշխատանքի կազմակերպումն ու աշխատանքային որերի հաշվառքը (աշխատանքային գըրքույկներում գրանցելը), կոլխոզի անդամներին ծանոթացնել 1931 թվին յեկամուտները բաշխելու կարգի հետ:

Հացամթերման ահազանգի ժամանակ կուլտ-կազմակերպիչներն ու ստուգատեսի բըրիգաղների անդամները պետք է կոլխոզներին ծանոթացնեն հացամթերման առաջարությունների կատարման ընթացքի հետ: Նըրանք պետք է հասարակական կարծիք ստեղծեն՝ հացը կալսիչից ուղղակի դեպի ելեկատոր տանող անընդհատ կարմիր գումակի, հասարակական-կոռպերատիվ կազմակերպությունների կողմից հացը հանձնողներին մարտականորեն սպասարկելու միջոցով պլանը հաջողությամբ և ժամկետից առաջ կատարելու համար: Անհատականների մեջ պետք է մասսայական աշխատանք ծավալել, նրանց կողմից կոնտրակտացիոն պարտավորությունները կատարելու համար:

Հացամթերման կամպանիայի գործնական հարցերը պետք են ինչնեն խրճիթ-ընթերցարանների, կոլխոզային առողմանների և կարմիր անկյունների ուղադրության կենտրոնում: Սակայն, տեղերից ստացված լուրերն ասում են, վոր շատ կուլտ-հիմնարկություններ մի կողմ են կանգնած այս տարվա հացամթերման կամպանիայից: Ստավրովովի սոցկուլառայի տունը բերքահավաքման ու հացամթերմումների շուրջն ագիտ-մասսայական աշխատանք չի կազմակերպում բըրիգաղներում և հացամթերման կայանում: Կուլտկոմիտաներն անգործության են մատնված:

Նույն Ստավրովովի նագեթղա գյուղիորհրդում կուլտ-աշխատանքը դադարել է: Խըճիթ-ընթերցարանները հեռու

յին քաշված բերքահավաքից, կալսից և հացամթերմաներից: Շնորհիվ դեպի հացամթերման կամպանիայի շուրջը տարվելիք ագիտ-մասսայական աշխատանքի հանդեպ անուշաղիք, կարճատես վերաբերմունքի, մի քանի ուայոններում արդեն այսոր կարելի յէ տեսնել հացի ընդունման անբավարար կազմակերպվածություն, փոխադրության ժամանակ հափշտակություն և հացահատիկների ապարդյուն կորուստ, ճեղքը վածքներ՝ աշխատանքի կազմակերպման ու հաշվառքի մեջ:

Ինչպես առաջ, բերքահավաքման և հացամթերման կամպանիայի թույլ կողմն և հանդիսանում տարան (թարա):

Նովոչերկասկի ուայոնում կատարել են անհաջող ամրացում հացի ընդունման կետերին: Ելեկատորները պատրաստ չեն յեղել հացահատիկներն ընդունելու: «Սոյուզաբուլիքի» բաժանմունքը մինչև հուլիսի կեսը մատը մատին չի խփել վորպեսզի պարկերի պակասը լրացնի առանց տարայի փոխադրության ամենահասարակ հարմարեցումով: Հացահատիկով լի պարկերը կուտակված են բրեկենտի տակ, վորը ջուր և անցկացնում:

Գյորգիեևսկու ուայոնում պարկերով ապահովված են յեղել 25 տոկոսով, բայց իր ժամանակին գործնական քայլեր չեն արել տարայի խիստ մեծ պակասությունը վերացնելու համար: Կրիայի նման և քայլում կրասնոդարի ուայոնի «Խմիչի հիշատակը» կոլխոզը: Հացն առանց տարայի փոխադրելու համար 100 արկղ պատրաստելու փոխարեն, նա պատրաստել ե... ընդամենը մեկ արկղ:

Զարմանալի չե, վոր այսպիսի աշխատանքի շնորհիվ, վերջին յերկու ուայոնները մինչև հիմա հացամթերմումների ոլլանների կատարման ասպարեզում պոչից են քարշ գամա:

Խրձիթ-ընթերցաբանը, դպրոցը, կարմիր-անկյունը,
կարող են կատարել մեծ աշխատանք՝ բերքահավաքին, հա-
ցն իր ժամանակին մթերակայանները տանելուն ոգնելու
համար:

Կուլտ-բանակայիններից ու դպրոցականներից պետք
է կազմակերպվեն բրիգադներ, վորոնք պետք և ճարին ու
կարկատեն պարկերը, կարպետները, բրեգնանները, նորո-
ւեն արկղները սարքելու նյութերը, դրանով հեշտացնելով
հացի տեղափոխությունն առանց տարայի, վորի ժամանակ
համապատասխան հարմարեցումներ պիտի լինեն հացահատի-
կի արագ դուրս թափվելու համար:

Հնկ. հոնովը հաղորդում ե, վոր այդ դժվար չե անել
և չնշին միջոցներ և պահանջում: «Դրա համար կարելի յե
գործել հատուկ, ծղնոտե խսիրներ և սրանք փոել սովորա-
կան սայլի տակին ու պատերին: Կարելի յե հարմարեցնել
առանձին արկղներ, բացվող տախտակներով, կամ հացը
կուտակելիս կողքի վրա շուռ յեկող արկղներ: Վերջապես,
դժվար չե ուստագործել տախտակավոր վագոնները—սայ-
լակները»:

Այս առաջարկն ստուգված ե Հյուսիսային կովկասի
ամենալավ կոլխոզների պլակտիկայով:

Կուլտ-հիմնարկները պետք ե գլխավորեն արկղների
սարքման, հացամթերքների ու բանջարեղենի արագ տեղա-
փոխման վերաբերյալ լավագույն առաջարկի մրցանակա-
բաշխությունը:

Անցյալ տարի մեր յերկրամասը բաղմաթիլ ցենտրներ-
ըով հաց կորցրեց՝ շնորհիվ տրանսպորտի աշխատանքի սը-
ման ժամանակ ցուցահանած անփույթ վերաբերմունքի:
Տեղերից ստացված լուրերն ասում են, վոր այժմյան

բերքահավաքման ու հացամթերման կամպանիայում ևս բա-
նըն այնքան ել հաջողակ չե: Մենք հացահատիկ ենք կոր-
ցնում կալսելու, բեռնելու, փոխադրության և մթերակայան-
ներում հացը կուտակելու ժամանակ:

Մենք չկալված հասկը թողնում ենք դաշտում:

Մենք հացահատիկը փչացնում ենք անձրեի տակ, ու-
շացնելով դեղեր կիտելն ու կալսը:

Մենք վճռական պայքար չենք մղում առանձին կոլ-
խողնիկների անկարգապահության դեմ, վորոնք կալսելու
և փոխադրելու ժամանակ ծախծնում ու գողանում են
հացը:

Այսպիսով քամուն են տրվում ժողովրդական փողերը,
եղուր տեղը բանվորական աշխատաժամեր են կորավում ան-
արդյունավետ պարապուրդների ժամանակ և մարդկային ու
քարշող ույժի ոգտագործումն անձարակ կազմակերպելու
շնորհիվ:

Բրյուխովկեցկու ուայոնում (Պերեյասլավկի ստանիցա)
քամին քեց հացի 2000 դեղեր, շնորհիվ աշխատանքի ցա-
ծր վորակի:

Մոգաչկի անվան կոլխողում, Տիմոշևսկու ուայոնի
Ստարո-Վելիչկովի ստանիցայում քարշող ույժն ոգտագոր-
ծվում ե անսլան, վոչ լրիվ բեռնվածությամբ: 4—6 բրի-
գադներում ձիյերն ոգտագործվում են միայն 50 տոկոսով:
25 բրիգադներում—վոչ ավելի 52 տոկոսից: Միենանույն ժա-
մանակ 60 հատ վերանորոգված հնձիչներ պարագ կանգնած
են միայն այն պատճառով, վոր ձիյեր չկան:

Դրիմի ուայոնի «Հոկտեմբեր» կոլխողում, Ստավրոպոլի
ուայոնի Նադեժդա դյուզիսորհուում ամեն որ պարագ են
տրակտորները: Սխալ են ոգտագործվում մեքենաները,
գյուղատնտեսական ինվենտարը: Այստեղ մինչև հիմա չ-

վերացված դիմագրկությունը (օձևութակ): Այստեղից — աշխատանքի ցածր վորակ և վոչ հազվագյուտ գեղքեր — մեռքենաների ջարդվածքներ ու վասավածքներ:

Հացահատիկների կորուստների ու հափշտակման, մարդկանց, լծկանի ու մեքենաների ապարդյուն պարապության դեմ մղվող պայքարը, ճրդեհաշեջ պահակության և բերքի կազմակերպումը, պետք եւ համապատասխան տեղ գտնեն Խորձիթ-ընթերցարանների, Կոլխոզային ակումբների, դաշտային կարմիր վրանների աղիտացիոն-մասսայական աշխատանքում:

Բոլոր կուլտ-բանակայինները պետք եւ մասնակից լինեն կոլխոզային բերքի կորուստների դեմ մղվող պայքարին: Վոչ մի հացահատիկ չպիտի մնա դաշտում, վոչ մի կիլոդրամ հաց չպիտի կորչի ճանապարհին:

Միւլերովոյի մի քանի կոլխոզները, շնորհիվ հնձիչների վրա հարմարեցված, հատիկ վորսացող գործիքի (զերհուղութել), յուրաքանչյուր հնձիչի դիմաց հավաքնեցին ավելի քան 2 ցենտներ հաց:

Միթե այս ամենահասարակ հարմարեցումներն անմատչելի յեն ամեն մի կոլխոզի:

Պետք է կուվել կոլխոզային բերքի յուրաքանչյուր ցենտների համար, խայտալուրյան պյունին համել այն կոլխոզնիկներին, վարոն մեղքով կորչում եւ հացը:

Բերքահավաքման ու հացի կարման բոլոր կետերում Խորձիթ-ընթերցարանները, կոլխոզային ակումբը, կարմիր վրանը — պետք եւ ունենան շարքային կոլխոզնիկներից նըշշակված կուլտ-բանակայինների հոկիչ պոստեր, վորոնք պիտի ողնեն արտադրական խորհրդակցությանը՝ Կորստների գետք պայքարը կազմակերպելու և պիտի լուսաբանն աշխատանքի ընթացքը:

Հոկիչ պոստը հետեւում եւ բանվորական և քարշող ուժը ճիշտ ոգտագործելուն, դեպի մեքենաներն և այլ գյուղատնտեսական ինվենտարը հոգատար վերաբերմունքին և նրանց ճիշտ ոգտագործման: Նա հետեւում եւ վորպես զիշտ սուրածերն առանց հացահատիկների կորստի հացվեն կալսման տեղն և այնտեղից — ելեկվատոր, վորպեսզի մոռացված հասկերը ժամանակին հավաքվեն և վորպեսզի արտերը հնձելուց հետո կոլխոզը թուշուններին քշե դաշտ, թափված հատիկներով կերպելու համար:

Կարմիր գումակներին ուղեկցող կառապաններից ու ձիապաններից խորձիթ-ընթերցարանը կաղմակերպում եւ միջանցիկ բրիգադաներ: Յուրաքանչյուր կուլտ-բանակային կոլխոզնիկ, վորոն ուղեկցում եւ հացի գումակը, հետեւում եւ վորպեսզի հացահատիկը կանոնավոր բարձիփ սայլին, վորպեսզի նա ճանապարհին չթափի արկղների ու պարկերի ծակերից, հացը վագոնին բեռնելու և ելեկվատորների մոռացարկելու ժամանակ չթափիթիլի:

Հացամթերման կայաններում նույն կերպով նշանակվում են կուլտ-բանակայինների հոկիչ խմբակներ, վորոնք պայքարում են կոլխոզնիկների՝ հերթերում իզուր տեղը սպասելու, շնչքերի անհարմարության (հացահատիկների անփույթ պահպանման), հացը հանձնողների կուլտուր-կենցաղային սպասարկման հանգեց անուշադիր վերաբերմունքի գետք:

Բերքի պահպանությունը պետք եւ առնվի հասարականության հատուկ, աղթուն հսկողության տակ:

Բերտուչենսկի ուայոնի Ն. Ալեքսեյվակի և Պշեխսկի գյուղերում ոպորտունիստներն, ինչպես յերեսում եւ ըավական ամուր են բուն դրեւ: Հացի կալսը ճգճգելու վերաբերյալ կուլակային աղիտացիայի վրա նրանք նայում են

մատների արանքով։ Վատ և զըլված բերքի պահպանությունը։ Կոմսոմոլոն և այլ կազմակերպություններն անդորձության են մատնված։ Մինչեռ բերքահավաքման ու հացամթերման պլանների կատարման վիճակն ահազանգ և առաջ բերում։

Այդ գյուղերում անհատականը գտնվում և դասակարգային թշնամու ազդեցության տակ։ Նա քաշքառմ և հացի կալման և մինույն ժամանակ կնոջը պարկ (մեշոկ) տված, ուղարկում և կոլխոզային դաշտից հասկեր քաղելու։

Ստավրոպոլի Նադեժդա գյուղիորհրդում ինչ-վոր մարդկարգում են ընկած հասկերն իրենց համար, վոմանք եր առանց քաշվելու, պոկում են կոլխոզային ցորենը. լըցնում զարյուղների մեջ ու տուն տանում։

«Ազատ գյուղացի» կոլխոզում չկա մի վորևէ միջոց հրդեհները կանխելու համար, Կալում մոռացել են ջրով վտակառներ դնել։

1930 թվականին Արմավիրի ռայոնում և Բատայսկում յեղան հացի գեղերի և կալսված հացահատիկի հրդեհումներ, վորոնք կազմակերպվել եյին կոլակիության կողմից։

Տեղերից յեկած լուրերը նախագուշացնում են մեղ կուլակային տականքների նոր փորձերի մասին՝ իրենց ձանկերը պարզելու դեպի կոլխոզային բերքը

Գասակարգային թշնամու նման փորձերը պետք է հանդիպեն կուսակցական-խորհրդային ու կոլխոզային հասարակայնուրյան վճռական ու անխնա հակահարվածին։

Նմանապես չի կարող հանդուրժելի լինել հաշվողական փետարեւմները դեպի կուլակուրյան ազենտները—աջ ուղուրտունիսները։

Մեքենաների պահեստների մոտ, մթերակայաններում, բերքի հավաքման ու հացի կալման տեղերում խրճիթ-ըն-

թերցարանը, դպրոցի և կոմսոմոլի հետ միասին, կազմակերպում ու գործի յե դնում հրդեհաշեջ խմբակներ, կոլխոզային բերքի պաշտպանության բրիգադներ, վորոնք հերթապահություն են անում ամենապատասխանատու տեղերում, պայցքարում են խորձերի հափշտակության դեմ, հացն ու մեքենաները պահպանում են հրդեհից։

Վոչ մի կիլոգրամ հացահատիկ չպիտի ընկեր սպեկուլատիվ տուկա։ Դպրոցը, խրճիթ-ընթերցարանը պետք և կենդանի մասնակցություն ունենա հացի «սև սայլերի» դեմ մղվող պայցքարին։ Պետք և կոլխոզում ստեղծել այնպիսի դրություն, վորով յուրաքանչյուր կոլխոզնիկի պատվի խնդիրը լինի՝ հացի ժամանակին հանձնումը պետական մթերակայանին («Պրավդա»)։

Ծովաներին կարելի յե ամրացնել գպրոցականների խմբակներ, վորոնք հացի սայլեր ժամանելու դեպքում, անհատական զրուցյներ են ունենում գյուղացիների հետ, նրա համար, վորպեսզի կոլխոզնիկներին ու անհատականներին դարձնեն դեպի ելեվատոր—պետական մթերակայանները։

Զարամիտ սպեկուլատների մասին հասարակական տեղում փակցվում են մի տասնյակի խարազանող լրտունդներ, թոռուցիկներ, բազմատիրաժ-տեղեկադրեր, վորով բնակչությանը կոչ և արվում հասարակական բոյկոտի յենթարկել հացի սպեկուլատներին։ Խրճիթ-ընթերցարանը չպիտի մոռանա նաև անհատականի ցանքսերի կոնտրակտացիայի մասին։ Նա պետք է նրան հիշեցնի համապատասխան լոգունդների ու պլակատների միջոցով, վոր անհրաժեշտ և իր ժամանակին կատարել պետության հանդեպ վերցրած պարտավորությունները։ Անհատական սեկտորում ազիտացիոն-մասսայական աշխատանք կատարելու համար, անցյալ տարվա փորձի հիման վրա պիտի ստեղծել հարգածային կոլխոզ-

Նիկների հատուկ բրիգադաներ, վորոնք անհատականների մեջ կկատարեն ագիտացին-մասսայական աշխատանք, շըրշելով նրանց տները, կոնտրակտանտների հետ խմբակային դրույցներ անցկացնելով և այլն:

Առաջապոր կոլխոզները, վորոնք ժամկետից առաջ կատարել են հացամթերման պլանը, ողնում են յետամաց հարկաններին: Նրանք ուղարկում են բուխտիային բրիգադներ, ագիտացին խմբակներ, առանձին ընկերների, հացի համար մզգող պայքարի և հացամթերումներին գործնականութեն ողնելու սոցիալիստական փորձի փոխանակման համար:

Միլերովոյի ուսյոնի Լյուտովսկի գյուղիորհրդի «Կառուցող» կոլխոզն աշխատանքի լավ որինակ և տալիս նա իր ժամանակին ափարտեց բերքի հավաքումն և բուկիրային բրիգադա ուղարկեց «Կարմիր հասկ» յետամաց կոլխոզը: 130 հնագողներ անհրաժեշտ ինվենտարով պիտի ողնեն: հացի հունձն ու կալմն իր ժամանակին կատարելու համար: Կազմակերպեն կարմիր գումակների անընդհատ հոսանք, վորոնք հացը կալսիչի տակից տանում են ելեվառորները:

Կուլտուրական բանակի, գյուղի ամբողջ հասարակայության միացյալ ճիգերն անկասկած կապահովեն վճռական հաջողություններ՝ հացամթերման պլանները հաստատակես սահմանված ժամկետերում կատարելու բնադավառություն:

Նրանք կողնեն առաջավոր կոլխոզներին՝ փչանալուց պահպանել հացահատիկը, պակասացնել կորուսները, ավելացնել բերքը, — նվաճել լավագույն տեղը հացի համար ամենաաջղակ պայքարի փոխանցիկ գրոշակին տիրանալու համար:

Վճռական պայքար մղենք հացահատիկների կորսի ու հափէտակուրյան դեմ, ներթերում հացը հանձնողների ապարդյուն պարագարդների դեմ:

Հայարակական բուկսիրի առնենք յետամաց կալխոզներին: Ոգնենք նրանց հացամթերման առաջադրությունները կատարելու:

Հանդիպական պլանով կատարենք հացամթերման առաջադրությունները ժամկետից առաջ յել հավելումով:


Վոյ մի ցենսներ հաց մասնավորին: Բոլոր ավելցուկները — պետության:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱՅԸ ՀԱՆՉՆՈՂԻ ԿՈՒԼՏՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Բերքահավաքման ու հացամթերման պլանների ժամանակին կատարման, կուլակային գիմադրության ու ֆասարության հաղթահարման պայմաններից մեկը հանդիսանում է կուլտուր-մասսայական ու քաղաքաւուսավորական աշխատանքի ծագալումը հացը հանձնողների մեջ, անմիջականորեն մթերակայաններում և ելեվառորներում:

Մեր յերկրամասի առաջավոր ույոններն արդեն մեծ աշխատանք են սկսել հացը հանձնողների կուլտուրական սպասարկման և հացամթերման կամունիայի շուրջը կունողային մասսաների կազմակերպման ասպարիցում:

Կամենուկու ույոննի գյուղիորհրդներում և մթերակայաններում նշանակված են կուլտաշխատողներ, հացամթերման կայանները ժամանող հացի կարմիր գումակներին սպասարկելու համար: Վաղական պատճենը են բրիգադներ



ուղարկված են գյուղերը՝ մասսայական աշխատանք կատարելու:

Հացամթերումների կուլտուր-մասսայական սպասարկումը Ռումանովսկի ռայոնում 1930 թվականին անցկացվեց կարմիր անկյունների միջոցով, զորոնք կազմակերպվել ելին յուրաքանչյուր մթերակայանին կից: Կարմիր անկյունն ունի տեղեկատուններ, գրքեր, լրագրեր և ժուրնալներ: Ռումանովսկայա և Մարտինովսկայա գյուղերում, կարմիր անկյուններին կից կազմակերպվել ելին տրանսլյացիոն ռադիոհաղորդումներ: Զարոնսկու մթերակայանում զրվել ե հատուկ բարձրախոս: Բացի զրանից, մթերակայաններում բացվել են թեյատրներ, վորաեղ հաց հանձնողն ստանում եր բոլորը, ինչ զոր անհրաժեշտ ե նախաճաշի համար: Մթերակայանում գյուղացին ստանում եր հարկավոր տեղեկություն և լրագիր, ինչպես նաև վայելում կուլտուրական հանդիսատ և ստանում անհրաժեշտ մթերքներ:

Ժողովրդական լուսավորության՝ Պետրովսկու ռայոնական խորհուրդը ելեվատորին կից կազմակերպվեց խճճիթ-ընթերցարան: Այստեղ ամեն որ լինում են թարմ լրագրեր և ժուրնալներ: Այստեղ ևս աշխատում ե ռադիոապարատը: Սոցկուլտուրայի տան կողմից նշանակված հատուկ մարդ հացը հանձնողների համար բարձրածայն ընթերցումներ և զրույցներ և անցկացնում: Նա նույնպես հետևում է հացամթերման պլանի լավագույն կատարման համար կոլխոզների մրցության տախտակին: Ֆինորդանները ներկայացուցիչ են նշանակել, տեղեկատու սեղանի վրա ամեն որ աշխատելու համար: Ցերորդ ընկերը նշանակված ե սպառողական կոռպերացիայի կողմից, կուլտ-թեյատան ու կոռպերատիվ կրպակում աշխատելու համար: Ելեվատորը կանոնավոր կերպով սպասարկում ե շարժական կինոյով:

Անկասկած ե, զոր հացը հանձնողի լավ դրված կուլտուր - կենցաղային սպասարկումը նպաստում է կոլխոզների ամրապնդման գործին, համատարած կոլեկտիվացման ավարտման և կուլակի, իբր գասակարգի, վերացման: Դրա հետ միաժամանակ բավարարվում են կոլխոզներին աճող կուլտուր-քաղաքական պահանջները: Այնուհետև, ելեվատորներում և հացի հանձնման կայաններում կարմիր գումարների կազմակերպված դիմավորումը ծառայում ե զորպես ամենակարճ ժամանակամիջոցում հացամթերման պլանները հարվածայնորեն կատարելու միջոց, քանի զոր ելեվատորներում և հացի ընդունման կայաններում մասսայական կուլտուր-քաղաքական աշխատանքը թույլ ե տալիս ամենամեծ չափով լայնացնել հացի մթերակայանների աշխատանքի ծավալը և բոլորովին վերացնել հերթերը: Բացի զրանից, մասսայական աշխատանքն ոգնում ե ի հայտ բերելու և պատրաստելու հացի արշավանքի ակտիվիստների կազմեր, զորոնք վոչ միայն կարողանան իրենց կոլխոզում փոխանակել հացամթերումների շուրջը կատարած աշխատանքի մարտական փորձը, այլ և կկարողանան ողնել յետամաց կոլեկտիվ միություններին՝ ճիշտ կազմակերպելու ույժերն և մասսայական աշխատանք կատարել հացամթերման կամպանիայի պլանը կատարելու և գերակատարելու համար:

Ահա թե ինչու անհրաժեշտ ե ելեվատորներում և հացի մթերակայաններում ծավալել մասսայական կուլտ-լուսավորական աշխատանքը՝ գյուղերի և ռայոնների բոլոր կազմակերպությունների լայն ու ակտիվ մասնակցության հիմունքով:

Ի՞նչպես կազմակերպել կուլտուր-լուսավորական աշխատանքը հացը հանձնողների մեջ:

Բոլոր հաց ընդունող մթերակայաններում, ապրանքային

կայարաններում (յերկաթուղիներում), նավակայաններում, վորոնք մեծ քանակությամբ հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ են ընդունում, ելեկատորներում—կաղմակերպվում են ժամանակակիր կարմիր անկյուններ, կուլտվաններ—մասսայական քաղցրացավարական և կուլտուր-կենցաղային աշխատանքի նախնական կետեր:

Այսպիսի կարմիր անկյուններ պարտավոր ե կաղմակերպել յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարան (կոլխոզային ակումբ), յերկաթուղայինների և ջրային աշխատավորների յուրաքանչյուր տեղիում, հացամթերող կաղմակերպությունների հետ միասին, վորոնց գործնեյության ռայոնում կատարվում ե հացի մթերումը:

Կարմիր անկյունը կանոնավոր ստանում ե լրագրեր և ժուրնալներ: Նա իր տրամադրության տակ ունի շարժական գրադարան, վորը պիտի բաղկացած լինի առորյա քաղաքական, գյուղատնտեսական և հացամթերման հարցերի շուրջը մատչելի գրքերից, պետք ե ունենա խաղերի («շաշկի», գոմինո, «գորոդկի») պարագաներ, թուղթ՝ պատի լրագրի համար, սոցիալիստական մրցության ու հարվածայնության տախտակներ: Անկյունը զարդարվում ե լողունգներով, պլակատներով ու թուոցիկներով: Կուլտուրայանին կից սարքվում ե ռադիո-բարձրախոս, վորը ցանկալի յէ, վոր կապված լինի ռայոնական տրամայցացիոն ռադիո-հանգույցի հետ: Նույն տեղում կաղմակերպվում ե տեղեկատու սեղան:

Իր ամենորյա աշխատանքի համար տեղեկատու սեղանը պետք ե ունենա համապատասխան տեղեկատու-դրքեր, բոլոր հարցերի շուրջը կենտրոնական ու ռայոնական կուսակցական-խորհրդային որդանների վորոշումներն ու պլանները, ինչպես նաև հանրագումարային տեղեկություններ բոլոր կոլխոզներում ու սովխոզներում բերքահավաքի ու

հացամթերումների պլանների կատարման ընթացքի մասին: Որինակ,—

1) Հերկաթուղային կոմիտեյի Բյուրոյի՝ 31 թվականի հունիսի 31-ի վորոշումը և Յերկրումի վերջին պլենումի բանաձեռը, իշխանության տեղական որդանների և մթերող կաղմակերպությունների պլանները՝ հացամթերումների և ցանքսերի կոնտրակտացիայի մասին:

2) Հողգործկոմատի ու Կոլխոզկենտրոնի գիրեկտիվները՝ 1931 թվականին կոլխոզներում յեկամուանները բաշխելու, աշխատանքի կաղմակերպման կանոնների և մշակույթի սուսավորության նորմանների մասին:

3) Վորոշումներ միասնական գործության և նրա վիճակախաղերի մասին, ինչպես նաև վորոշումներ սպառողական կոոպերացիայի, սոցիալիստական անասնաբուժության ծավալման մասին:

4) Գյուղի համար տեղեկատու—իրավաբան, կոլխոզնիկի սեղանի որացույց,—արանք պետք ե լինեն ամեն մի կարմիր անկյունում: Բացի գրանից, տեղեկատու սեղանը պիտի ունենա տախտակ, հացը հանձնողներին վերաբերող հարցերն ու պատասխանները փակցնելու համար:

Կարմիր անկյան տնտեսական կահավորումը բարդ չե: Յերկու-յերեք սեղան, նստարաններ, արկդ-կուլտիվնենտարի համար և աման—յեռացրած ջրի համար:

Խոշոր եկամուրներում ու հացամթերման կայաններում կաղմակերպվում են խրճիթ-սպասավայրեր (ազեռօջիկալին): Նրանց կից հատկապես տրամադրած շենքերում սարքվում են կուլտուրական թեյատրներ, կոոպերատիվ ձաշարաններ, մթերային կրպակներ ու վրաններ, կիյոսկներ՝ գրքեր տարածելու, լրագրերի բաժանորդագրություն

ընդունելու, պետքոխառությունների որևէ դաշիները վաճառելու համար, նշանաձգության տեղեր (ՏԱՐ) և այլ կուլտուրական գործադրությունների:

Այս կուլտուրական հիմնարկները միաժամանակ սպասարկում են հացամթերման կայանի բանվորներին և ժամանող կոլխոզներին ու անհատականներին—հաց հանձնողներին:

Խրճիթ-ընթերցարանն իր տրամադրության տակ ունի կամ մի քանի սենյակ, վորոնք գտնվում են հացամթերման կայանի բակում, կամ թե նրան կից շենքերում:

Են գեղագերում, յերբ հատուկ շենք չկա, պետք են արց դնել կամ տաքացվող բարակ, կամ դոնե «չարգախ» տանք կատարելու համար:

Բացի դրանից, խրճիթ-սպասավայրն իր տրամադրության տակ ունի բացողյա բեմ, մասսայական ու ագիտացիոն գեղարվեստական յելույթների համար և եկրան-կինոնկարների ու լուսավորվող լրագրեր ցույց տալու համար: Հացի ընդունման ամենախոշոր կայաններում Սրբուղինությի և աղմինիստրացիայի ուժերով կահավորվում ե կինո-թատրոնական բեմ:

Խրճիթ-սպասավայրի կահավորանքին կարելի յե ավելացնել նաև մոդական լապտեր, կինո-ապարատ (ԾՈՒ), յերածշտական գործիքների կոմպլեկտ՝ շրջիկ ցուցահանդեսների կոմպլեկտ՝ կոլխոզային շինարարության, ագրոնոմակայի, հացամթերման մարտական հարցերի շուրջը, կուլտուրական պետքանությունները:

Ռայոնական նշանակություն ունեցող հացամթերման կայաններին կից խրճիթ-սպասավայրը, կուլտուրականն ե

այլ կուլտուրական հիմնարկները կազմակերպվում են ժողովրդական լուսավորության ու այոնական խորհրդի, արհեստակցական, հասարակական, կոռպերատիվ կազմակերպությունների կողմից, հացամթերման կայանի հետ միասնող:

Կարմիր անկյունների աշխատանքը ղեկավարելու համար խրճիթ-ընթերցարանների (կոլխուդային ակումբների), դաշտային կարմիր վրանների, կոմյերիտական կազմակերպության, դպրոցի, հացամթերման կայանի բանվորների ու ծառայողների կուլտուրական կազմակերպվում են ըրհգադներ, կարմիր անկյան վարչչի—ամբողջ կուլտուրական աշխատանքի կազմակերպչի գլխավորությամբ (ցանկալի յե, վոր նա ամբողջովին ազատված լինի իր արտադրական աշխատանքից և վարձատրվի ի հաշիվ հացի ընդունման կայանի ու հասարակայնության:

Կուլտուրիտադայի անդամների թվին միացվում են կամագոր կուլտուրակայինները, վորոնք ամրացված են տվյալ միթերակայանին.—զրույցներ, ու զեկուցումներ կարդացողները—կարմիր գումակներին դիմավորելիս մասսայական միտինդներ, հավաքներ կազմակերպողները, ընթերցող-զող-գրատարները, ակտիվ գյուղթղթակիցները, գարմոնիստները կամ այլ յերաժիշտները, կազմակերպիչները, սոցականական մրցության ու հարվածայնության տախտակներ վարողները, տեղեկատու սեղանի ղեկավարները, ուղիո-հաղորդումների կազմակերպիչները, կապի աշխատողներն ու հետախույզները (բազեական):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վերջիններս յուրաքանչուր բնակավայրում դպրոցականներից, ձիապաններից, հացամթերման ամանող սայլվորներից մարդիկ են ամրացնում ավարտելեկատորին: Նրանք գեպի հացամթերման կայաններն

Են ուղեկցում հացի խոշոր քանակ տանող կարմիր գումակներին, տեղեկություններ են ըերում իրենց ընակավայրերում տնտեսա-քաղաքական կամպանիաների անցկացման մասին, կարմիր անկյուններին մատակարարում են լրագրեր, ժուրնալներ և այլ պարագաներ—մանավանդ մասսայական աշխատանքի համար:

Այդպիսի բրիգադներն իրենց աշխատանքը կատարում են ամենորյա հերթապահության կարգով:

Մեծ քանակությամբ հաց ստացվելու որերում միաժամանակ կարող ե հանդես գալ ամբողջ բրիգադան, հացը հանձնողներին քաղաքա-լուսավորական աշխատանքի բոլոր ձևերով սպասարկելու համար:

Բացի վերը հիշված աշխատողներից, վորոնք մոտակա խրճիթ-ընթերցարանի (կոլխոզային ակմբի) կողմից ամրացված են հացամթերման կայանին, պլանային կարգով հացամթերման կայանին սպասարկում են ազիտացիոն-դեղաբարվեստական բրիգադները, ռադիոն, շարժական կինոները, կուլտ-կոմբայնները, վորոնք կազմակերպվում են ռայոնական կենտրոնում, ինչպես նաև խոշոր գյուղերում (ստանցիաներում):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Դրա հետ միաժամանակ շարժական կուլտ-կազմակերպություններն սպասարկում են նաև կոլխոզների արտադրական բրիգադներին,—հացի բերքահավաքի ու կալսի վայրերին, Հացամթերուաների հարվածային որերում միքանի կարմիր գումակների միաժամանակ դիմավորելիս հացի մթերակայանն են բերվում փողային և լարային յերաժշտակամբեր:

Խոշոր մթերակայանների խրճիթ-սպասավայրերում կուլտ-կազմակերպիչներն ամբողջովին աղատվում են արտա-

գրական աշխատանքից, վարձատրվում են ի հաշիվ հացամթերող որգանների, տեղկումի ու արհմիության, ինչպես նաև ույոնական ոպերացիաների: Կուլտ-թեյատան, կոռպերատիվ կրակակ-բուռներու վրա հաստիքը (շտատը) նույնպես պիտի ունենա վոչ պակաս, քան մեկ կոռպերազմակերպիչ: Մասցածը նկերներն աշխատում են հասարակական կարգով և նշանակվում են կոլխոզների կանանց ակտիվիտեց, դպրոցներում սովորողներից և խորհրդային հիմնարկների ծառայողներից, վարոնք ցանկանում են իրենց արձակուրդն ողտագործել մասսայական աշխատանքի համար:

Կուլտ-թեյատան, կոռպերատիվ կրակ-բուռներու կազմակերպումը, անհրաժեշտ ինվենտարով և ամանեղենով կահավորելը, մթերքներ ու ապրանքներ տալն, ամբողջ սպասարկումը կատարվում ե ի հաշիվ սպասարդական կոռպերացիայի մոտակա բաժանմունքի ույժերի ու միջոցների:

Խրճիթ-սպասավայրերում և կարմիր անկյուններում տարգում ե ամենորյա մասսայական քաղլուսավորական աշխատանք:

Միջերովոյի ելեվատորին կից արդեն կազմակերպված և խրճիթ-սպասավայր: Մայ ոնական կազմակերպությունները — սայկոլիմպակտությունը, կոմյերիտմիությունը, ույհողվարչությունը, դպրոցները նշանակել են իրենց ներկայացուցիչներին՝ ընթերցարանին սպասարկելու և հացը հանձնողների միջ ազիտացիոն-քացատրական աշխատանք կատարելու համար: Միայն մի կազմակերպություն ե մնացել պոչում — քաղսպառկոպը: Մինչև 1931 թվ, հուլիսի 30-ը նա հազիվ սկսում և շարժմել վորպեղի պլանային կերպով մնադամթերքներ ու ծխախոտ մատակարարի գյուղացիներին, վարոնք ժամանում են մթերակայանը:

Հացով բեռնված կարմիր գումակների կազմակերպված,

պլանային ժամանումը պահանջում ե մասսայական միջոցառումների կայուն ժամակարգ (расписание), վորտեղ նախատեսնվում ե, թե ինչ պիտի արվի հացը հանձնողների մի վորոշ խմբակի սպասարկման համար, վորը պոչից ե քարտակիս, իր զյուղինորհողում չի կատարում փինանսական սլանների վերաբերմամբ ստացած պարտավորությունները և այլ հանձնողների համար, վորոնք հացամթերման կամպանիայի առաջին շարքերումն են դաշնութեամբ: Բացի զրանից, պլանում պետք ե մատնանշված լինի, թե ով ե կատարում տվյալ աշխատանքը:

Սակայն կուլտո-կազմակերպիչն ու կուլտո-կայանին ամբացված բրիգադան պետք ե պատրաստ լինեն կատարելու նաև արտասլանային աշխատանք (զրույց, լրագրերի ընթերցում, միթքնդ և այլ միջոցառումներ) այն հաց հանձնողների մեջ, վորոնք ելեվատոր են դալիս անսպասելի կերպով (առանց կանխապես նախազդուշացնելու):

Ի՞նչ կուլտաշխատանքներ և ի՞նչ նյութի մասին կարող են կատարել հացը հանձնողների մեջ կուլտանակայինների ամրացված բրիգադները:

Հացը հանձնողների ժամանելու և իրենց հերթին սպասելու ժամանակ նրանց համար տեղի յե ունենում լրագրերի ու ժուրնալների բարձրածայն ընթերցում, հետազարույցով, կազմակերպվում են հարցերի ու պատասխանների յերեկոյթներ և ցերեկոյթներ, տրվում են գրավոր ու բանագործություններ, լուրեր են փակցվում բերքահավաքման ու հացամթերման պլանների կատարման և այլ տնտեսա-քաղական կամպանիաների անցկացման մասին, կարճ լուրեր են տրվում վերջին ներքին ու արտաքին գեպքերի և իշխանության տեղական որդանների վորոշումների մասին, բայց թողնվում պատի լրագիր-բյուլետին. տեղի յե ունենում

կոլխոզնիկների կամավոր ընդունելությունը հացամթերման կամպանիայի հարվածայինների շարքերը, հաց հանձնողներից կազմվում են բրիգադներ, յետաժնաց կոլխոզների հացամթերման պլանների կատարումն ստուգելու և նրանց ողնելու համար: Հենց այստեղ ել առաջադրություններ ու հրահանգներ են տրվում: Կազմակերպվում ե ռադիո-հաղորդում:

Յերեկոյան ժամերին լինում են կինո-սեանսներ և լուսավորվող լրագրի ցուցադրություն, վորի նյութը պիտի լինի բերքահավաքի ու հացամթերման կամպանիան: Ուստադործվում են նաև աշխատանքի ուրիշ ձևերը, վորոնք մեծախսեր չեն պահանջում: Հացի մեծ քանակություն ժամանելու դեպքում հանդես են դալիս կենդանի լրագրերը, աղիտո-բրիգադները, կուլտ կուրայնները:

Բարձրածայն ընթերցումների, զրույցների ու գեկուցումների համար նյութ պիտի ծառային կուսակցական-խորհրդային որգանների վորոշումներն և տեղեկություններ տեղական որգա չարիք կազմող հարցերի մասին:

Գյուղացիների մեջ պետք ե պարզաբանել չկ(բ)կ կենտրոմի հունիսյան պլենումի արդյունքները (ընկ. Յակովեվիչ զեկուցումը), կուսակցության Յերկըային կոմիտեյի վորոշումները, չկ(բ)կ կենտկոմի, ժողկոմիսորի ու կոլխոզի ենտրոնի դիմումը կոլխոզներում յեկամուտները բաշխելու, սոցիալիստական անասնապահությունը զարգացնելու, մասին: Պետք ե պատմել հացամթերմանների նշանակության մասին, հայտնել, թե գործարաններն ինչ կտան կոլխոզնիկներին, ինչպես նրանց կմատակարարեն մեքենաներ ու ապրանքներ՝ հացի և զյուղատնտեսական այլ մթերքների մթերումները ժամանակին կատարելու դեպքում:

Այդ զրույցներն ու գեկուցումներն անցկացնելու հա-

մար պետք և ոգտագործել տեղական փաստական նյութերը, վորոնք ցույց կտան, թե ավյալ հարցն ի՞նչ դրության մեջ և (հացի բերքահավաք, հացահատիկների մթերում, փոխառություն և այլն) գտնվում տվյալ ուայոնում կամ բնակավայրում:

Այս կողմից կուլտ ~ բանակայիններին անգնահատելի ծառայություն կարող են մատուցել կապի աջևատողներն ու նետախայզները, վորոնք մասսայական միջոցառումների կազմակերպիչներին կպատմեն, թե ավյալ հարցի վերաբերմամբ ի՞նչ՝ դրություն և աիրում այն բնակավայրում, վորտեղից ժամանել կարմիր գումակը և ի՞նչ հարցեր են հետաքրքրում հացը հանձնողներին: Բոլոր զրույցների ժամանակ պետք և ընդունվեն կոլխոզնիկների համապատասխան գործնական առաջարկները՝ քննվող հարցի շուրջը (հացամթերումների պլանն իր ժամանակին կատարելու պարտավորությունը վերցնելը, Յ-րդ, վճռական տարվա փոխառության տարածումը և այլն):

Չի կարելի լուսությամբ անցնել միջազգային դրության, որպ պատերազմի վտանգի հարցերից: Պետք է զրույց ունենալ համաշխարհային ճգնաժամի մասին, այն մասին, թե կապիտալիստներն ինչպես պատերազմի յեն պատրաստվում և ի՞նչ անում մեր կառավարությունը, վորպեսզի ամրապնդի իր պաշտպանողական ունակությունը, ի՞նչ է կատարվում ֆերմանիայում և այլն:

Տեղեկատու սեղանում աշխատող բրիգադայի և սոցիալիստական մրցության տախտակի կազմակերպչի համար ևս մեծ աշխատանք կա:

Պետք է իր ժամանակին պատրաստել պլակատները, վորոնք պիտի խոռն այն մասին, թե վո՞ր կոլխոզներն և ի՞նչքան հաց պիտի հանձննեն և ի՞նչպես են նրանք կատարությունները:

